ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դատավորը չի կարող մասնակցել վարույթին, եթե՝

☐ ա) մինչդատական վարույթում դեպոնացրել է տվյալ վարույթով մեղադրյալի մերձավոր ազգականի ցուցմունքները,

☐ բ) խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքների վարույթով բավարարել է տվյալ վարույթով մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը,

☐ գ) նույն մեղադրյալի նկատմամբ մեկ այլ վարույթով կայացրել է մեղադրական դատավճիռ,

☐ **դ) միչդատական վարույթում առերեսվել է մեղադրյալի հետ:**

Մեղադրյալի ցուցմունքը՝

☐ ա) քննչական փորձարարության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով հաղորդած և պատշաճ արձանագրված տվյալներն են,

☐ բ) դեպքի վայրի զննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով հաղորդած և պատշաճ արձանագրված տվյալներն են,

☐ գ) ցուցմունքը տեղում ստուգելու ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով հաղորդած և պատշաճ արձանագրված տվյալներն են,

☐ դ) անձնական խուզարկության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով հաղորդած և պատշաճ արձանագրված տվյալներն են:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Եթե անձը հասել է քրեական պատասխանատվության տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ունակ չի եղել ամբողջությամբ գիտակցելու իր արարքի հակահիրավականությունը կամ ղեկավարելու իր արարքը, ապա՝

☐ ա) Պատիժ նշանակելիս դա հաշվի է առնվում որպես մեղմացնող հանգամանք:

☐ բ) Ենթակա չէ քրեական պատասխանատվության:

☐ գ) Ազատվում է քրեական պատասխանատվությունից և նրա նկատմամբ նշանակվում են դաստիրակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

☐ դ) Նրա նկատմամբ նշանակվում են անվտանգության միջոցներ:

Ա-ն ցանկանում էր Բ-ի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել: Այդ նպատակով վերջինս հանեց հրազենը գրպանից և ուզում էր կրակոց արձակել, սակայն, լսելով մոտեցող անցորդի ձայնը, փորձեց թաքցնել այն գրպանում և փախուստի դիմել, բայց պատահաբար կրակոց արձակեց Բ-ի ուղղությամբ և վերջինիս առողջությանը պատճառեց ծանր վնաս: Ինչպե՞ս պետք է որակել Ա-ի արարքը՝

☐ ա) Առողջությանն անզգուշությամբ ծանր վնաս պատճառել:

☐ բ) Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու փորձ:

☐ գ) Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու փորձ և անզգուշությամբ ծանր վնաս պատճառել:

☐ դ) Առողջությանը ծանր վնաս պատճառել:

☐

ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ս.Կարապետյանն ատելությամբ էր լցված Մ.Հայրապետյանի նկատմամբ, քանի կարծում էր, որ իր փոխարեն անարդարացիորեն նրան էին նշանակել բանկի կառավարչի պաշտոնում, ուստի որոշեց վրեժխնդիր լինել: Ս.Կարապետյանը պատվիրեց 17-ամյա Վ.Միքայելյանին և 19-ամյա Կ.Գասպարյանին սպանել

Մ.Հայրապետյանին՝ խոստանալով գործը բարեհաջող ավարտելու դեպքում յուրաքանչյուրին տալ 500.000-ական ՀՀ դրամ գումար:
Վ.Միքայելյանը և Կ.Գասպարյանը նախապես պայմանավորվեցին, որ չեն սպանի Մ.Հայրապետյանին, այլ մի լավ դաս կտան նրան: Այդ նպատակով նրանք վերցրեցին խոհանոցային դանակը և ուղևորվեցին Մ.Հայրապետյանի բնակության վայր՝ սպասելով նրան: Տեսնելով տուժողին՝ նրա հետևից բարձրացան աստիճաններով և մուտք գործեցին վերջինիս բնակարան: Վ.Միքայելյանը և Կ.Գասպարյանը Մ.Հայրապետյանի 8-ամյա որդու ներկայությամբ ծեծի ենթարկեցին նրան, Կ.Գասպարյանն իր մոտ գտնվող դանակով, իսկ Վ.Միքայելյանը՝ իր մոտ եղած կռփազենքով բազմաթիվ հարվածներ հասցրին Մ.Հայրապետյանի մարմնի տարբեր հատվածներին: Գլխին ստացված հարվածի արդյունքում Մ.Հայրապետյանը զրկվեց մեկ աչքի տեսողությունից, իսկ մնացած մարմնական վնասվածքները պարունակում էին առողջությանը միջին ծանրության վնասի հատկանիշներ: Քննության ընթացքում պարզվեց, որ Մ.Հայրապետյանի 8-ամյա որդին հոգեկան առողջության խնդիրների պատճառով չէր ընկալել հոր նկատմամբ կատարված գործողությունների բնույթը:
Նախնական դատալսումների փուլում Վ.Միքայելյանի պաշտպանը միջնորդում է անթույլատրելի ճանաչել դատատեխնիկական փորձաքննության եզրակացությունը: Իր դիրքորոշումը պաշտպանը հիմնավորում է նրանով, որ փորձագետի եզրակացությունում, որպես օգտագործված աղբյուրներ, նշվել են ռուսալեզու գրականություն, «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքը և «ГОСТ Р 51215-98 «Оружие холодное термины и определения»»: Պաշտպանը փաստարկել է, որ ԳՕՍՏ Ռ 51215-98 «Սառը զենք. Տերմիններ և սահմանումներ» Ռուսաստանի Դաշնության ստանդարտը կազմված է ռուսերենով, իսկ դրա հայերեն թարգմանված օրինակը հասանելի չէ որևէ աղբյուրում, ՀՀ պաշտոնական տեղեկագրերում հրապարակված չէ, հետևաբար՝ չի գործում, որպիսի պայմաններում այս ստանդարտը չի բավարարում «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին, չի կարող համարվել «օրենք», ուստի հիշյալ ստանդարտը հնարավոր չէ կիրառել հայտնաբերված առարկայի՝ կռփազենք հանդիսանալու հանգամանքը որոշելիս: Դատարանը բավարարում է պաշտպանի միջորդությունը:
Հարց. Ինչպե՞ս պետք է որակվեն Ս.Կարապետյանի, Վ.Միքայելյանի և Կ.Գասպարյանի արարքները: Հիմնավորե"ք պատասխանը:

ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

15-ամյա Դ.Մաթևոսյանը և 20-ամյա Վ.Կարապետյանը որոշեցին հափշտակություն կատարել Լ.Հայրապետյանի բնակարանից: Պայմանավորված օրը նրանք մուտք գործեցին տուժողի բնակարան: Տեսնելով Լ.Հայրապետյանին՝

Դ.Մաթևոսյանն իր հետ վերցրած խաղալիք ատրճանակն ուղղեց նրա ուղղությամբ, իսկ Վ.Կարապետյանը պահանջեց հանձնել տանը եղած ողջ գումարը: Լ.Հայրապետյանը հայտնեց, որ տանն ընդհանրապես գումար չի պահում, ամբողջն իր բանկային քարտի վրա է, սակայն, այդ պահին քարտն իր մոտ չէ:

Դ.Մաթևոսյանը և Վ.Կարապետյանը պահանջեցին, որպեսզի Լ.Հայրապետյանը հեռախոսով մուտք գործի իր բանկի «Mobile» հավելվածը և փոխանցում կատարի իրենց հաշվեհամարին, սակայն Լ.Հայրապետյանը հրաժարվեց, ինչից հետո Դ.Մաթևոսյանը բռունցքով ուժեղ հարված հասցրեց Լ.Հայրապետյանի գլխին, իսկ Վ.Կարապետյանը՝ որովայնի շրջանին՝ պահանջելով իրենց հանձնել բջջային հեռախոսը և հայտնել հավելվածի մուտքանունն ու գաղտնաբառը: Լ.Հայրապետյանը ստիպված կատարեց պահանջը, Վ.Կարապետյանը հավաքեց մուտքանունն ու գաղտնաբառը և իր հաշվեհամարին փոխանցեց քարտի վրա եղած ողջ գումարը՝ 600.000 ՀՀ դրամ գումար:

Դ.Մաթևոսյանի և Վ.Կարապետյանի գործողությունների արդյունքում Լ.Հայրապետյանի առողջությանը պատճառվեց միջին ծանրության վնաս:

Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով 2025 թվականի հունիսի 1-ին հարցաքննվում է Լ.Հայրապետյանը, ով հայտնում է դեպքի վերը նկարագրված բոլոր մանրամասները: Նույն թվականի հունիսի 3-ին Լ.Հայրապետյանի քարտով կատարված գործարքների պատմությունը ստանալու և վերջինիս կողմից մատնանշված 600.000 ՀՀ դրամի չափով փոխանցում ստացած հաշվեհամարը պարզելու նպատակով քննիչը բանկային գաղտնիք կազմող փաստաթղթերի առգրավում կատարելու միջնորդություն է ներկայացնում առաջին ատյանի դատարան: Դատարանը բավարարում է քննիչի միջնորդությունը: Ստանալով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչպես նաև հիմք ընդունելով Լ.Հայրապետյանի ցուցմունքները՝ քննիչը հունիսի 20-ին ձերբակալում է Դ.Մաթևոսյանին և Վ.Կարապետյանին հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի այն հիմքով, որ ականատեսը վերջիններիս ուղղակի մատնանշել է որպես քրեական օրենքով նախատեսված արարքը ուղղակի կատարողի: Հսկող դատախազի կողմից Դ.Մաթևոսյանի և Վ.Կարապետյանի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվում: Քննիչը մեղադրյալների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն է ներկայացնում առաջին ատյանի դատարան, որը բավարարվում է:

Հարց. Գնահատե՛ք նախաքննության մարմնի և դատարանի գործողությունների իրավաչափությունը: Հիմնավորե՛ք պատասխանը: